18.11.2025թ.

Հասցեատեր՝ Կադաստրի կոմիտե
Դիմող՝ Ռուստամ Գրիգորյան
Հի քաղաքացի
Հասցե՝ Երևան, 0037, Քանաքեռ-զեյթուն,

Էլ.հասցե՝ r.grigoryan002@gmail.com:Հեռ՝
Կալիբրի Գրուպ ՍՊԸ
Ք.Երևան Ա.Իսահակյան 8,26

Դիմում

Կադաստրի Կոմիտեի Ղեկավարի
Ս.Թովմասյանին

Հարգելի Պ.Թովմասյան,

Ես՝ Ռուստամ Գրիգորյանս, հանդես եմ գալիս որպես ֆիզիկական անձ և դիմում եմ՝ ներառվելու Կադաստրի կոմիտեին կից հասարակական խորհրդի կազմում և մասնակցելու կոմիտեի կողմից սահմանված գործունեությանը՝ համաձայն գործող օրենսդրական կարգավորումների:

Իմ մասնագիտական գործունեությունը ամբողջովին ուղղորդված է անշարժ գույքի ոլորտին: Ունեմ ավելի քան 8 տարվա փորձ ռիելթորական գործունեության մեջ, որից 2 տարին՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում, որտեղից էլ սկսել եմ խորությամբ ուսումնասիրել ոլորտը: Հայաստան վերադառնալուց հետո 2 տարի աշխատել եմ ռիելորական կազմակերպությունում, իսկ վերջին 4 տարիներին հանդիսանում եմ Calibri Group ընկերության հիմնադիր տնօրենը, որը մատուցում է գնահատման և ռիելթորական ծառայություններ:

Անշարժ գույքի գնահատման ոլորտում գործում եմ արդեն 2 տարի: 2023 թվականի սեպտեմբերի 22-ին ստացել եմ գործունեության համար անհրաժեշտ որակավորումը և ներկայումս իրականացնում եմ գնահատումներ՝ ներառյալ Գերակա շահի գոտում:

Բացի այդ, հանդիսանում եմ Հայաստանի Անշարժ Գույքի Գործակալությունների Ասոցիացիայի (ՀԱԳԳԱ) համահիմնադիր և խորհրդի անդամ: Ասոցիացիան վերջին երկու տարիներին նախաձեռնել և իրականացրել է մի շարք ծրագրեր՝ ուղղված ոլորտի զարգացմանը, մասնագիտական կրթության բարելավմանը և միջազգային համագործակցության ընդլայնմանը:

Վերջին երկու տարիներին ակտիվ մասնակցություն եմ ունեցել ռիելթորական գործունեության վերաբերյալ օրենսդրական նախագծի մշակման գործընթացներին՝ հանդիպելով Կադաստրի կոմիտեի ղեկավարության, ինչպես նաև Ազգային ժողովի ներկայացուցիչների հետ: Գործընկերների հետ համատեղ մշակել ենք ոլորտային առաջարկությունների փաթեթ, որոնց կարևոր մասը ընդունվել և ներառվել է նախագծում:

Միջազգային մակարդակում հանդես եմ եկել Հայաստանի ներկայացմամբ մի շարք հարթակներում.

- 2024 թ.՝ Միլան, մասնակցություն *International MLS Forum*-ին ՀԱԳԳԱ կազմում: Հեղինակավոր միջոցառում էր, որտեղ ներկա էր Աշխարհի անշարժ գույքի էլիտան:
- Նույն թվականին՝ ելույթ *CEPI* (Եվրոպայի անշարժ գույքի մասնագիտությունների ասոցիացիա) տարեկան համաժողովում՝ ներկայացնելով Հայաստանը և ՀԱԳԳԱ-ն,
- 2025 թ. ապրիլ՝ Հայաստանի անշարժ գույքի շուկայի ներկայացում Վրաստանում՝ *Georgia Expo*-ում,
- 2025 թ. մայիս՝ Աթենքում մասնակցություն Հոմսթեյգինգի Եվրոպական Ասոցիացիայի(EAHSP) համաժողովին:

Ակտիվ համագործակցում եմ տարբեր միջազգային կառույցների հետ և մշտապես ուսումնասիրում եմ ոլորտի միջազգային փորձն ու պրակտիկան:

Կրթություն.

- Բակալավր՝ ՀՊՏՀ, Կառավարում (2021 թ.)
- Մագիստրատուրա՝ ՀԱՀ, Գործարար կառավարում - MBA (2024 թ.)
- 2019 թ. մասնակցել, ավարտել և հավաստագրվել եմ Կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպած անշարժ գույքի պետական ռեգիստրի մասնագիտական ուսուցման դասընթացին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ դիտարկել իմ թեկնածությունը և հնարավորություն տալ ներգրավվելու Կադաստրի կոմիտեին կից հասարակական խորհրդում: Վստահ եմ, որ իմ փորձը, ոլորտային գիտելիքներն ու միջազգային համագործակցության շրջանակները կարող են ավելացված արժեք ստեղծել Հայաստանի անշարժ գույքի ոլորտի զարգացման համար:

Հարգանքով,
Ռուստամ Գրիգորյան